



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Շուշին դարձնենք զարգացման խորհրդանիշ

Մայիսի 9-ին ազգովի տոնեցինք Շուշիի ազատագրման 25-ամյակը: Շուշիի ազատագրումն Արցախյան ազատամարտի հաղթանակի և արցախցու հաղթական նպատակասլացության խորհրդանիշն է համարվում: Թեև նախքան Շուշիի ազատագրումը եւ նրանից հետո ունեցել ենք այլ հաղթանակներ եւ ճաշակել պարտություններ եւս, սակայն Շուշին այլ բան է: Հաղթանակը՝ հաղթանակ, բայց Շուշիի ազատագրման մեջ պետք է որոնել հաղթանակով արձանագրված հոգեկան նվաճումը, այն, որ դրդապատճառ է հանդիսանում զարգացման եւ նոր նվաճումների: Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ լինում են պահեր, որոնք կերտում են ոչ միայն տվյալ ժողովրդի ճակատագիրը առարկայորեն, այլ նաեւ ներշնչանքի աղբյուր են հանդիսանում հետագա զարգացման համար:

Հարյուր տարուց ավելի քիչ ժամանակահատվածի տարբերությամբ մեր ժողովրդի պատմության մեջ տեղի է ունեցել ներշնչանքի երկու իրադարձություն: Առաջինը՝ 1918թ. մայիսի 26-ին Սարդարապատում, իսկ երկրորդը՝ 1992թ. մայիսի 9-ին Շուշիում:

Արցախյան հաղթանակի խորհրդանիշ Շուշիի ազատագրման առիթով արդեն 25 տարի տոնակատարություններն ու խրախճանքները մի կողմ թողնելով՝ մի պահ հաղթանակի բերկրանքն ապրելուց հետո պետք է մտածել նաեւ հաղթանակը իրականության վերածելու մասին, հաղթանակով զարգացումն ապահովելու եւ հաղթանակից նոր հաղթանակներ կերտելու մասին:

Շուշիի ազատագրումը տեղի ունեցավ Արցախյան ուժերի միջոցով՝ առանց հույս դնելու սրա-սրա օգնության, սրա-սրա խոստման կամ մատակարարվող զենքի վրա: Պետք է մարեր Արցախի մայրաքաղաքի վրա տեղացող կրակի հիմնական կետը: Մենք մեր առաջ դրեցինք խնդիր եւ լուծեցինք այն: Սա Շուշիի ազատագրման հիմնական պատգամն է՝ երբ վճռական տրամադրությամբ ենք մղվում որեւէ գործի, երբ հաղթանակն այլընտրանք չի ունենում, խնդրի լուծումն անշրջելի է:

Այսօր մեր հանրապետությունը կանգնած է հազար ու մի չլուծված հարցերի դեմ հանդիման: Այդ չլուծված խնդիրները նախ եւ առաջ մեր վճռականությանն են կարոտ, իսկ հետո Հայաստանի եւ համահայկական միջոցների: Այլ խոսքով՝ եթե մենք չունենանք մեր մեջ երկիրը զարգացնելու շահագրգռվածությունն ու նախանձախնդրությունը, այլ մարդ չի կարող մեր փոխարեն անել դա:

25 տարի է անցել այն օրից, երբ ազատագրվեց Շուշին: Իսկ Արցախի զարգացման հիմնական պատկերը երեւում է հենց Շուշիում: Ինչքան էլ առիթներ լինեն մեր պատմությունով պարծենալու, Շուշիի պատմությունը որպես հայկական մշակութային կենտրոն ներկայացնելու իրականությունը մնում է այսօրվա Շուշին:

Այսօրվա Շուշին, մեղմ ասած, անմխիթար վիճակում է: Թեև վերջին տարիներին շանքեր են գործարկվել Շուշին բարեկարգելու, բազմաբնակարան շենքեր վերակառուցելու եւ մինչեւ իսկ պետական օդակներ եւ ուսումնական հաստատություններ տեղափոխելու Շուշի, սակայն քաղաքը դեռեւս պատերազմական գոտի է հիշեցնում:

Ահա այստեղ է, որ պետք է համախմբենք համայն հայության շանքերը: Ահա այստեղ է, որ մեր 25 տարիների հաղթանակի խորհրդանիշը պետք է մեկընդմիջ տվերակառուցենք եւ դարձնենք ոչ միայն հաղթանակի, այլ զարգացման խորհրդանիշ:



Կուլիցիան փաստաթղթավորվեց

Մայիսի 11-ին Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրում Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջեւ ստորագրվել է քաղաքական կուլիցիա կազմավորելու մասին հուշագիր, որը կգործի մինչեւ 6-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Քաղաքական վերոնշյալ երկու ուժերը կուլիցիոն հուշագրով քաղաքական պատասխանատվություն են ստանձնել կառավարության ողջ գործունեության համար: Ստորագրված փաստաթղթում ամրագրված են քաղաքական կուլիցիայի շրջանակներում համագործակցության ռազմավարական նպատակները, կուլիցիայի առաջնահերթությունները, գործունեության եւ կազմակերպման կարգը:

Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից փաստաթուղթը ստորագրել է ՀՀ նախագահի տեղակալ Արմեն Աշոտյանը, Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից՝ ՀՀ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը:

Արմեն Աշոտյանն իր խոսքում նշել է, որ հուշագրի ստորագրման համար հիմք են հանդիսացել սահմանադրական փոփոխությունները, կնքած նախորդ կուլիցիոն հուշագիրը, 2 կու-

սակցությունների նախընտրական ծրագրերը, ինչպես նաեւ ԱԺ ընտրությունների արդյունքները:

«Կուլիցիայի գործունեության հիմնական ուղղություններն են լինելու մարդը, հասարակությունը եւ պետությունը: Մենք ունենք բազմաթիվ արժեհամակարգային ընդհանրություններ ՀՀ-ի մեր կուլիցիոն գործընկերոջ հետ, ինչից ելնելով հիմա՝ խարսխվել է այն տեսքով, որը գալիք 5 տարիների համար հիմք է լինելու երկու ազգային կուսակցությունների համագործակցության համար: Հիմք, որի վրա կառուցվել է նոր Սահմանադրությունը», - հայտարարել է Աշոտյանը, ապա հավելել, որ հիմնական պայքարի ոլորտներից են լինելու նոր Սահմանադրությունը, ազգ-բանակի ներդրումը, իրավական դաշտի բարեփոխումները, գործող Սահմանադրության համատեքստում մրցունակ տնտեսության զարգացումը եւ, իհարկե, մարդու, մարդու ազատությունների եւ իրավունքների հետ շղկապված ինստիտուտների զարգացման խնդիրները:

Աղվան Վարդանյանն իր ելույթում նշել է, որ ԱԺ ընտրություններից հետո մենք մտնում ենք մի փուլ, երբ երկու կուսակցությունները ձգտելու են որակական փոփոխություններ կատարել, եւ համառ աշխատանքի արդյունքում կարող ենք հասնել այդ որակական

փոփոխություններին:

«Երբեք հիմնարար արժեքներ են դրված մեր հուշագրի հիմքում: Դրանք մեր սահմանների անվտանգությունն են, Արցախի անվտանգությունը, տնտեսությունն ու տնտեսության կարգավորումն ու զարգացումը եւ երկրում որակական արմատական փոփոխություններ անելու վճռականությունը», - ընդգծել է Վարդանյանը:

ՀՀ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը լրագրողների հետ զրույցում ասել է, որ նոր համագործակցությամբ կպահպանվեն ՀՀ-ին 2016-ին տրամադրված նախարարական երեք պորտֆելներն ու երկու մարզպետի պաշտոնը:

Բացի դրանից, երկու կուսակցությունները համագործակցության աշխատակարգը նոր թափ կստանա եւ ՀՀ-ՀՀ-ի քաղաքական խորհուրդը պարբերաբար նիստեր կգումարի, որտեղ որոշումները կկայացվեն կոնսենսուսի միջոցով:

Արմեն Ռուստամյանի խոսքով՝ ՀՀ-ն իրենց նախարարներին եւ մարզպետներին այլ ՀՀ-ականներով փոխարինելու մտադրություն չունի: ՀՀ-ի հետ քաղաքական համագործակցության հուշագրով ավելի մեծ ուշադրություն կդարձվի կոռուպցիայի դեմ պայքարին, կադրային քաղաքականությանը եւ ընտրական գործընթացներին:


Շուշիի ազատագրումն իմաստավորեց ԼՂՀ հռչակումը



Վերջերս լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահրամ Բալայանի «Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում» մենագրությունը, որը նվիրված է Շուշիի ազատագրման 25-ամյակին:

Կարդացե՛ք 4-րդ էջում

Թուրքիայում ապրում է 4 միլիոն հայ. Հայկազուն Ավրոյան



Թուրքիայի կրոնափոխ հայերի, նրանց խնդիրների եւ տեսանելի վտանգների մասին «Ապառաժ»-ը բացառիկ զրույց է ունեցել Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն-գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն Հայկազուն Ավրոյանի հետ:

Կարդացե՛ք 7-րդ էջում

Ունենք արժանի հերթափոխ, անվեհեր երիտասարդների մի սերունդ. Բակո Սահակյան



Սիրելի՛ հայրենակիցներ, Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան ազատամարտի թանկագին վետերաններ, Պաշտպանության բանակի հարգարժան գեներալներ, սպաներ, զինվորներ, հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ Հայրենական տոնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձի առթիվ, փառավոր հաղթանակներ, որոնք մեր ժողովուրդը կերտել է պատմության տարբեր քառուղիներում՝ իր քաջ զավակների ցուցաբերած արիության, խիզախության, հայրենիքի հանդեպ անձնուրաց սիրո շնորհիվ:

Մեր լեգենդար հայրերի ու պապերի սիրանքը Հայրենական մեծ պատերազմում, նրանց ապրած կյանքը միշտ հպարտություն են պարգևել մեզ եւ ու-

ղենիչ հանդիսացել մեզ համար՝ առաջնորդելով դեպի նոր հաղթանակներ: Մենք ազատագրել ենք Շուշին՝ աչքի առաջ ունենալով հենց նրանց հերոսական օրինակը, որն անսասան հավատ է ներշնչել մեզ՝ սեփական ուժերի եւ արդարության հաղթանակի հանդեպ, սովորեցրել լինել տոկուն ու հաստատակամ, մաքառող ու նպատակասլաց: Արցախյան ազատամարտը դարձավ հայ ժողովրդի մեծագույն հաղթանակներից մեկը՝ լրացնելով մեր հերոսամարտերի շարքը:

Այսօր մենք հպարտ ենք կրկնակի, հպարտ ենք, որովհետեւ ունենք նաեւ արժանի հերթափոխ, անվեհեր երիտասարդների մի սերունդ, ում համար հայրենիքի սահմանների պաշտպանությունը եւ հարազատ ժողովրդի անվտանգությունը վեր են ամեն ինչից: Նրանք մեծագույն արժանապատվության զգացումով են շարունակում իրենց նախնիների գործը՝ պատմության մեջ թողնելով անձնավորության նոր օրինակներ: Փա՛ռք ու պատիվ մեր բոլոր հերոսներին: Փա՛ռք ու պատիվ հայրենիքի պաշտպանության սուրբ գործին իրենց կյանքը նվիրաբերած մեր նահատակներին:

Թանկագին՝ հայրենակիցներ, այս տոնական օրը եւ շնորհավորում եմ մեր ողջ ժողովրդին՝ Մայր Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Մենք բոլորս միասին ենք կերտել մեր նվիրական Եռատունգ, միասին ենք հաղթահարել բոլոր դժվարություններն ու փորձությունները, միասին ենք հարթել մեր հաղթական ուղին: Այդպես եղել է եւ այդպես կլինի ընդմիշտ: Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիս եւ մաղթում խաղաղություն, բարօրություն ու ամենայն բարիք:

Մեր իրավունքներն ու արժանապատվությունը չենք զոհաբերելու. Սերժ Սարգսյան



Սիրելի՛ հայրենակիցներ, Սրտանց շնորհավորում եմ ձեզ Հայրենական եւ խաղաղության տոնի կապակցությամբ:

Առաջին հերթին շնորհավորում եմ մեր վետերաններին, որոնց շարքերը, ցավոք, տարեցտարի նոսրանում են: Այսօր մեզ համար գեղեցիկ առիթ է արտահայտելու մեր մեծագույն հարգանքն ու հիացմունքը նրանց հանդեպ: Նաեւ առիթ է արտահայտելու մեր երախտագիտությունն այն հերոսական սերնդի նկատմամբ, որն անցավ գերմարդկային փորձությունների միջով եւ մեր երկրի համար ապահովեց խաղաղ աշխատանքի եւ զարգացման հեռանկար:

Երկրորդ աշխարհամարտը ծանր քննություն էր աշխարհի բազում ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի հա-

մար: Թե՛ մեր ռազմիկները կռվի դաշտում, թե՛ մեր աշխատավորները թիկունք դարձած Հայաստանում, թե՛ մեր հայրենակիցները սփյուռքում պատվով բռնեցին այդ քննությունը: Դա մեզ համար իրապես դարձավ Հայրենական մեծ պատերազմ: Մենք աշխատեցինք մեր ուժերի չափով, իսկ երբեմն մեր ուժերից վեր սիրանքներ գործեցինք՝ մոտեցնելով հաղթանակն ու բաղձալի խաղաղությունը:

1992 թվականի մայիսի 9-ից հետո այս տարեթիվը մեր ժողովրդի համար ձեռք է բերել կրկնակի իմաստ: Շուշիի ազատագրումով ոչ միայն Ստեփանակերտը, այլեւ Արցախի ողջ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից: Հայ ռազմիկների այս մեծագործությունը եւ դրա ամբողջական պատմական նշանակությունն այնքան ընդգրկուն են, որ դեռ շարունակելու են գնահատվել եւ վերլուծվել ուսումնասիրողների կողմից: Մի բան պարզ էր 1992 թվականի մայիսի 9-ին եւ պարզ է այսօր. մենք մեր կյանքն ու ազատությունը, մեր իրավունքներն ու արժանապատվությունը չենք պատրաստվում զոհաբերել եւ չենք զոհաբերելու:

Սիրելի՛ հայրենակիցներ, Կրկին շնորհավորում եմ ձեզ Հայրենական եւ խաղաղության տոնի առթիվ: Սա մարդատյաց քարոզչության եւ բռնության դեմ պայքարի ելաձեռնի եւ այդ պայքարում հաղթած հերոսների տոնն է: Անմահները մեր շարքերում են, եւ սա բուլրիս տոնն է:

Մաղթում եմ խաղաղություն եւ ստեղծարար աշխատանք:

Արցախը պարիսպն է Հայաստանի պաշտպանության. Արամ Ա կաթողիկոս

Ն.Ս.Օ.Տ.Տ վեհափառ հայրապետ Արամ Ա կաթողիկոսի ուղերձը՝ Շուշիի ազատագրման 25-ամյակի կապակցությամբ:

րահաստատենք յայտարարելով՝ թե Արցախի ժողովուրդը պիտի մնայ ամբողջ կամքով հաւատքով ու կամքով վերասիրացած իր ինքնորոշման

յաղթանակը կոչուած ենք ամրացնելու, ծաւալելու ու հարստացնելու՝ Արցախի հողին մեր ամուր կապուածութեամբ, Արցախի անկախութենէն ո՛չ մէկ գիշում

թեամբ կ'առնուի: Այս կը վկայէ Արցախի ազատագրումը:

«Ողջո՛յն Արցախի մեր հերոս ժողովուրդին:

Ողջո՛յն Արցախի անկախութիւնը կերտած մեր քաջ բանակին:

8 Մայիս 1992 թուականը մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ պիտի մնայ խորհրդանիշ Արցախի ժողովուրդի խոր հաւատքին, ամուր վճռակամութեան ու արեան գնով իր ազգային իրաւունքը պաշտպանելու գիտակից յանձնառութեան:

8 Մայիս 1992 թուականը մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ արձանագրուած պիտի մնայ որպէս նոր Սարտարապատ՝ Շուշիի ազատագրութեամբ եւ մեր հերոս տղոց խիզախութեամբ նուաճուած:

Անցան 25 տարիներ, սակայն Արցախի անկախութեան վերահաստատման մէջ ճակատագրական դեր ունեցած Շուշիի ազատագրումը իր յատկապէս պատգամով միշտ պիտի մնայ կենդանի մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Այսօր, 25 տարիներ յետոյ, տակ անցեալի դէպք մը չէ որ կը նշենք, այլ Շուշիի ազատագրութենէն եկող պատգամին մեր հաւատարմութիւնն է որ կը վե-



իարաւունքին.

թե Արցախի արի բանակը պիտի մնայ իր արիւնով ազատագրած իր հայրենի հողին արթուն պահապանն ու հզօր պաշտպանը:

Այսօր արդար ցնծութեան ու հպարտութեան օր է: Այսօր ծով գոհողութեամբ կերտուած յաղթանակի օր է: Պատերազմի դաշտին վրայ նուաճուած

կատարելու մեր յանձնառութեամբ, Արցախի բանակը աւելի հզօրացնելու մեր զօրակցութեամբ, Արցախի տնտեսութիւնը հարստացնելու մեր մասնակցութեամբ:

Մարդկային դարաւոր պատմութիւնը կը վկայէ, թէ իրաւունքը չի տրուիր, այլ՝ կ'առնուի. եւ բռնաբարուած իրաւունքը, ի պահանջել հարկին, արեան վկայու-

թեամբ կ'առնուի: Այս կը վկայէ Արցախի ազատագրումը:

Արցախը պարիսպն է Հայաստանի պաշտպանութեան.

Արցախը ամուր երաշխիքն է հայրենի հողին վրայ հայ ժողովուրդի ազատ ու անկախ ապրելու իրաւունքին.

Արցախը իր հերոսներու արիւնով ներկուած յոյսի ճանապարհ է՝ հայ ժողովուրդը դէպի ամբողջական Հայաստան առաջնորդող:

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հոմ. 8. 31): Արդ, միաբնակաբար, որպէս մե՛կ ազգ, հզօրացնենք, շէնցնենք, ծաղկեցնենք ու պաշտպանենք Արցախը:

Փա՛ռք Արցախի ու յատկապէս Շուշիի ազատագրութեան ճանապարհին վրայ իրենց արիւնը թափած մեր հերոսներուն:

Յարգանք Արցախի ղեկավարութիւնը վարած ու վարող մեր իմաստուն ղեկավարներուն:

Պատի՛ւ Արցախի մեր քաջ ժողովուրդին:

Եւ բի՛ւր օրինութիւն հայրապետական՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքէն:

**Աղօթարար՝
Արամ Ա. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ
8 Մայիս 201 Սևթիլիաս»**

Մայիսի 9՝ Հայոց եռատուն

Երեւի թե դժվար է նշել աշխարհի մեկ այլ ժողովրդի, ում մեկ օրացուցային օրն իր մեջ ամփոփի միանգամից երեք տուն եւ օրն այդ նշանավորի որպէս Եռատուն: Հայերս մեր տոնացուցում ունենք այդ օրը՝ Մայիսի 9-ը, որ քառորդ դար ի վեր՝ ավանդույթի ուժով ամեն տարի նշում ենք համազգային հպարտությամբ ու ցնծությամբ, այն իրավամբ համարելով նորագույն պատմության շրջանում մեր ժողովրդի ամենանշանակալի օրը: Խնդիրը գուցէ թե ոչ այնքան հայոց ազգային առանձնահատկության մեջ է, որքան հայոց պատմական ճակատագրի հողովույթում կամ, ավելի ճիշտ, առանձնահատուկ հողովույթում: Հնարավոր է՝ հենց այդ առանձնահատկության արդյունք է, որ տարվա մայիս ամիսը գրեթէ մեկ դար է, ինչ պատմական հաղթանակների շրջան է մեր ժողովրդի կյանքում՝ Սարդարապատի ճակատամարտում թուրքական ցեղասպան բանակի դեմ ջախջախիչ հաղթանակի տեսքով, Հայաստանի առաջին հանրապետության հռչակման, Երկրորդ աշխարհամարտում խորհրդային ժողովուրդների դառն բաժին դարձած Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, տասնամյակների գերությունից հայոց Շուշի բերդաքաղաքի վերջնական ազատագրման ավետիսներով, նորանկախ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի կազմավորման օրով:

Բայց, կարծում եմ, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած այդ նշանակալի պատմական իրադարձությունների նման գնահատանքը, այնուամենայնիվ, լիարժեք չի հնչի, եթէ դրանք ընկալենք սոսկ որպէս ճակատագրի կամքին խարսխված կամ այդ կամքից աղերսված արտահայտություններ: Ոչ, իհարկէ: Խնդիրն առավել քան խորքային է եւ անընդգրկելի ծավալուն՝ որպէս ազգային հոգեբանության արժեք, որ, իբրեւ այդպիսին, բխում է օրհասի ժամին համախմբվելու, մեկ միասնական բռունցք կազմվելու, միաբանվելու, մեկ հավաքական կամք դառնալու մեր ժողովրդի կարողությունից:

Անշուշտ, նույն այդ հավաքական կամքի արտահայտություն էր հայ ժողովրդի, այդ թվում՝ նրա արցախյան հատվածի անձնվեր մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին՝ Խորհրդային Միության եւ հակահիտլերյան դաշինքի մյուս պետությունների գինված ուժերի կազմում: Եթէ խոսենք գուտ թվերի լեզվով, ապա 1939-1945թթ. ֆաշիստական ժանտախտի դեմ ի գեւ էր ելել, ընդհանուր առմամբ, ավելի քան 600 հազար հայ՝ Խորհրդային Միությունից եւ աշխարհի այլ երկրներից: Նրանցից շուրջ 300 հազարը գոհվեց մարտի դաշտերում: Հարկ է նշել, որ պատմության մեջ երբեք էր հայ ժողովուրդը միաժամանակ ռազմի դաշտ չի հանել այդքան զինվոր եւ որեւէ պատերազմի ժամանակ այդքան մարդկային կորուստներ չի տվել: Մասնակիցներից 300 հազարը եղել է Խորհրդային Հայաստանից, որ կազմում էր բնակչության 22 տոկոսը, 200 հազարը՝ Խորհրդային Միության այլ հանրապետություններից: Սա, իրոք, զգալի թիվ է, եթէ հաշվի առնենք, որ 1939թ. տվյալներով հայերի թիվը Խորհրդային Միությունում 2 միլիոն էր, այսինքն՝ հայերի 25 տոկոսը մարտնչում էր: Բացի նրանցից՝ նաեւ 100 հազար հայ մարտնչում էր հակահիտլերյան դաշինքի երկրների զորքերի կազմում: Միայն Արցախ աշխարհից, ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը եւ Հյուսիսային Արցախը, պատերազմ է մեկնել մոտ 90 հազար հայ, որ կազմում էր տարածաշրջանի հայ բնակչության ավելի քան մեկ երրորդը: Նրանց գրեթէ կեսը ռազմաճակատի տարբեր հատվածներում

գոհվել է, այդ թվում՝ 22 հազարը մարզից, 18 հազարը՝ Հյուսիսային Արցախից, ընդհանուր առմամբ՝ 40 հազար մարդ: Մեծ թվով հայ տղամարդիկ եւ աղջիկներ գորակոչվեցին նաեւ Ադրբեջանի այլ հայաշատ վայրերից՝ Բաքվից, Նախիջեանից, Գանձակից, Շամախուց, Իսմաիլլիից, Ղուբա-Խաչմազ գոտու շրջաններից եւ այլ տարածաշրջաններից: Համեմատության համար նշեմ, որ պատերազմի տարիներին 19 ադրբեջանցուց գորակոչվել է ընդամենը մեկը: Ի լրումն նշեմ նաեւ, որ պատերազմն առիթ էր Ադրբեջանում դեռեւս 20-ական թվականներից սկիզբ առած հայաթափման գործընթացն առավել ծավալուն դարձնելու եւ արագացնելու համար:

Երկրորդ համաշխարհային ընթացքում կազմավորվել են 6 հայկական դիվիզիաներ: 103 հայ արժանացել է հերոսի կոչման, 27-ը՝ դարձել փառքի շքանշանի լրիվ ասպետ, իսկ մեդալներով ու շքանշաններով պարգևատրվել է շուրջ 80 հազար հայ: Հայ գեներալիտետի թիվը



ԽՍՀՄ-ում կազմում էր 64 մարդ՝ մարշալներ, գեներալներ, ծովակալներ: Նրանք պատերազմի ընթացքում ստանձնել են բարձր ու պատասխանատու պաշտոններ. 1-ը՝ ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 5-ը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, 100-ը՝ այլ զորամիավորումների հրամանատարներ: Հերոսաբար պաշտպանելով ժողովուրդների մեկ ընդհանուր տուն դարձած Խորհրդային Միությունը, հայ զորահրամանատարներն ու զինվորները քաջ գիտակցում էին, որ այդպիսով իսկ պաշտպանում են հայրենի բնօրրանը՝ Հայաստան-Արցախ աշխարհը: Մանավանդ, նրանց հայտնի էր, որ ֆաշիստական զորքերի կողմից Ստալինգրադը գրավելու պարագայում Հայաստանի սահմանների մոտ կենտրոնացած թուրքական 26 սպառնալից դիվիզիաներ պատրաստ են հարձակվել ու մտնել Հայաստան, հետեւապես՝ անխուսափելի կդառնար հայ ժողովրդի վերջնական բնաջնջումը: Բայց Ստալինգրադը, որի պաշտպանության դիրքերում մարտնչում էին ավելի քան 30 հազար հայ սպաներ եւ զինվորներ, մնաց անառիկ, ինչի շնորհիվ ի դերեւ ելան Հայաստանը հերթական անգամ հրի ու սրի մատնելու թուրքական իշխանությունների Նյութած հույսերը: Անկարայի այդ նկրտումները վերջնականապես փլուզվեցին 1945 թվականի մայիսի 9-ի հաղթանակով՝ գերմանական Ռայխստագի գրավմամբ, որի պատերի վրա սերունդներին ի պահ թողնվեցին նաեւ հայ մարտիկների հաղթական գրառումները, իսկ նրա փլատակների մոտ թափ առավ հայկական շուրջպարը՝ քոչարին: Ֆաշիստական Գերմանիայի դեմ 1945թ. մայիսի 9-ի հաղթանակը խորհրդային ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի միասնական հաղ-

թանակն էր:

Երկրորդ աշխարհամարտում հայ զորավարների ցուցաբերած բարձր ռազմարվեստը, հայ ռազմիկների անձնվեր հայրենասիրությունն ու հերոսականությունը, որպէս սերունդների փոխկանչ, իրենց հերթական փայլուն դրսեւորումը ստացան 2-րդ աշխարհամարտի-հաղթանակի ավարտից տասնամյակներ անց՝ 1991-1994թթ. Արցախյան Հայրենական պատերազմում՝ առանձնապէս 1992-ի մայիսի 9-ին, հայոց պատմական Շուշի բերդաքաղաքի ազատագրմամբ:

Նորահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության նորաստեղծ մարմիններն այդ ժամանակաշրջանում կառավարման համակարգի ձեւավորման դեռեւս առաջին քայլերն էին կատարում: Արցախահայության ինքնորոշման սահմանադրական իրավունքը, ցավոք, դարձյալ ըմբռնում չէր գտնում Բաքվում, եւ իշխանության կազմավորման աշխատանքներն իրականացվում էին Ադրբեջանի կողմից բացարձակ

յին պայմանները:

Շուշիի ազատագրման ռազմագործողությունը, որն անվանվել էր «Հարսանիք լեռներում», իրականացվել է 4 ուղղությամբ՝ միաժամանակյա հարձակումներով: Չնայած հակառակորդի գերակշռող ուժին, հայ հերոսների արիության եւ մարտունակության շնորհիվ Շուշին վերջնականապէս ազատագրվեց: Իսկ Լաչինի միջանցքի ազատագրմամբ ի վերջո ճեղքվեց հանրապետության տեւական շրջափակումը: Իրար կապելով Ստեփանակերտն ու Գորիսը, այն հիրավի դարձավ կյանքի ճանապարհ:

Շուշիի ազատագրումը հայոց պատմության ամենափառապանծ հաղթանակներից մեկն է համարվում: Եվ այն դարձավ հաղթանակի օր, հաղթության տուն: Հայ մարտիկների մեծ ու նվիրական սիրանքը դարձավ եւս մեկ հերոսական պատմություն, իսկ այդ օրը եկավ լրացնելու Արցախի եւ, առհասարակ, հայոց պետական նշանակալի տոների ցանկը:

Շուշիի հաղթանակը մեր նորագույն պատմության այն պանծալի էջը դարձավ, որը հետագայում հայրենասիրական շունչ ու ոգի փոխանցեց նոր սերունդին: Հայ զինվորն ապացուցեց, որ բազկի ուժով եւ միայն գեներով է հնարավոր կերտել հաղթանակը:

Մայիսի 9-ը դարձավ Եռատուն, որովհետեւ հենց այդ օրը պաշտոնապէս ճանաչվեց Արցախի Պաշտպանության բանակի կազմավորման օր: Արցախի Հանրապետության Չինված ուժերը, որոնք անգամ օտարերկրյա զինվորական գործիչների ու փորձագետների գնահատմամբ ամենամարտունակն են համարվում տարածաշրջանում, հիրավի երկրի ու ժողովրդի անվտանգության հուսալի երաշխիքն են: Պետք է առանձնապէս ընդգծել, որ 1994-ից մինչ օրս հակամարտության գոտում հարաբերական հրադադարը պահպանվում է բացառապէս Արցախի Հանրապետության զինված ուժերի շնորհիվ, որոնք զսպում են հակառակորդի ագրեսիվ գործողությունները եւ, ըստ էության, խաղաղարար առաքելություն իրականացնում տարածաշրջանում: Հարաբերական, քանզի Ադրբեջանը, պարբերաբար խախտելով 1994թ. մայիսյան համաձայնագիրը հրադադարի հաստատման մասին, առ այսօր շարունակում է սին հույսեր կապել դարաբաղյան հիմնախնդրի ուժային լուծման հետ: Ավաղ, անցած 24 տարիների ընթացքում այդպէս էլ չհաջողվեց հրադադարը փոխակերպել լիարժեք եւ համապարփակ խաղաղության, ինչի արդյունքում սահմանի երկու կողմերում մինչեւ այսօր զոհվում են մարդիկ: Պատճառն Ադրբեջանի ռեւանստական քաղաքականությունն է, որը չի դադարեցնում մարտական գործողություններ վերսկսելու սպառնալիքները: Բաքվի ցնորամիտ նկրտումները հերթական անգամ հուժկու հակահարված ստացան անցյալ տարվա ապրիլի սկզբներին՝ իր իսկ սանձազերծած լայնածավալ պատերազմում: Անշուշտ, թշնամուն դարձյալ ի ցույց է հանվել օրհասի ժամին համախմբվելու, մեկ միասնական բռունցք կազմվելու, միաբանվելու, մեկ հավաքական կամք դառնալու համայն հայության կարողությունը:

Այդպէս ու միայն այդպէս է հայոց բազմադարյա ճամփին ի հայտ եկել 1918-ի մայիսը, այդպէս են լույս աշխարհ եկել 1945-ի եւ 1992-ի մայիս ամիսները՝ ամեն մի առանձին դեպքում ոգեպնդելով, հայրենի բնօրրանում հարատեւելու հույս ու հավատ, ուժ ու կորով՝ հաղորդելով մեր ժողովրդին:

Սիդայել ՀԱՅՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան

Շուշիի ազատագրումն իմաստավորեց ԼՂՀ հռչակումը



Վերջերս լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահրամ Բալայանի «Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում» մենագրությունը, որը նվիրված է Շուշիի ազատագրման 25-ամյակին: Գրքի լույսընծայման շարժառիթների եւ, ընդհանրապես, հայկական իրականության մեջ քաղաքի դերակատարության մասին «Ապառաժ»-ը գրուցել է հեղինակի հետ:

- Պարոն Բալայան, ինչու՞ Շուշի: Ի՞նչ նշանակություն ունի այն հայոց պատմության մեջ:

- Շատ քիչ բնակավայրեր գոյություն ունեն, որոնք դրանք իսկ ստեղծած ժողովրդի պատմության, ճակատագրի մեջ այնպիսի վճռորոշ, երբեմն հակասական դերակատարություն ունեցած լինեն, ինչպես Շուշին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջին հազարամյակում արդեն Շուշիի բարձրակարգ կրթական կենտրոններն ունեին մի քանի ամրություններ: Սկզբնական շրջանում դեպի Հայկական լեռնաշխարհի սիրտը տանող կայաններում հայ թագավորները կառուցել են բերդեր, որոնք հնարավորություն էին տվել, որպեսզի թշնամին խորանա Հայկական լեռնաշխարհի մեջ, մանավանդ՝ շարժվի դեպի Այրարատ, որովհետեւ Արարատ սրբազան լեռան շրջակայքում էին գտնվում հայկական մայրաքաղաքները: Շուշին, որպես պաշտպանական ամրոց, միայնակ չի եղել: Հենց Շուշիի կիրճի վրա գոյություն են ունեցել մի քանի ամրություններ, որոնք հետքերն առայսօր պահպանվում են Դրանք ժամանակին եղել են ամրացված վայրեր, որոնք թույլ չեն տվել, որպեսզի հակառակորդը խորանա հայոց երկրի սրտում: Շուշիի՝ որպես հայոց պաշտպանիչ համակարգի հիմնական օղակի կարեւորությունը քաջ գիտակցել են ոչ միայն մեր իշխաններն ու զորապետերը, այլև մեր հակառակորդներն ու թշնամիները: Այսինքն՝ ոչնչացնել Շուշին, նվաճել այն, նշանակում է՝ հայ մարդուն, հայ բնակչին եւ, ընդհանրապես, հայոց երկիրը ղնել խոցելի կացության մեջ:

Պատահական չէ, որ 18-րդ դարի կեսերին թուրք ցեղապետերից մեկը՝ Փանահը, նպատակադրված միտք է դրել տիրանալ այս բերդին: Ցավոք սրտի, հայ մելիքների մեջ տեղի ունեցած զգվտոցների, հակամարտության հետեւանքով թուրքերը կարողացան այդ ամենն օգտագործել եւ ամրանալ Շուշիում: Շուշին 55 տարի գործում էր ընդդեմ հայության: Փանահը, հիմնավորվելով այստեղ, սկսեց պայքարել Արցախի մյուս մելիքների եւ, ընդհանրապես, արցախահայության դեմ՝ նպատակ ունենալով այս ամուր բերդն օգտագործել հայկական կուռ միասնությունը ոչնչացնելու համար:

18-րդ դարի ողջ երկրորդ կեսին Շուշին

հայության համար պատուհաս էր դարձել, սակայն եկան նոր ժամանակներ. ի նկատի ունեն 1805թ. Զյուրաքչայի պայմանագիրը, այնուհետեւ 1813թ. Գյուլիստանի պայմանագիրը, որոնք հնարավորություն տվեցին, որպեսզի Շուշին նորից դառնա հայկական: Ստեղծված խաղաղ իրավիճակը նպաստեց, որպեսզի Շուշին դառնա հայահավաք կենտրոն: Այստեղ սկսեցին հավաքվել ոչ միայն Արցախի տարբեր հատվածների բնակիչներ, այլև Նախիջևանից, Պարսկաստանից եւ հայկական մի շարք բնակավայրերից եւս այստեղ տեղափոխվեցին մեծ քանակությամբ հայեր: Այստեղ տեղափոխված հայերն իրենց հետ բերեցին գործարար ջիղը: Այս ունակությունը խառնվեց արցախցուն գենտիկորեն տրված ռազմիկ լինելու, գիտնական լինելու, քաղաքական գործիչ լինելու ունակություններին, եւ ստեղծվեց արցախցու ամբողջական կերպարը:

- Որո՞նք են Շուշիին անդրադառնալու շարժառիթները եւ ինչո՞վ է այն կարեւորվում՝ ըստ Ձեզ:

- «Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում» մենագրության ստեղծումն ուներ ոչ միայն գիտական հիմնավորում, այլև քաղաքական մեծ նշանակություն: Արդեքանի քաղաքական, գիտական շրջանակները տարիներ շարունակ փորձել են ոչ միայն հայության հողը, տարածքները խլել, այլ նաեւ հայ մարդու ստեղծած արժեքները, մեր բնակավայրերը համարել իրենցը, առավել եւս՝ Շուշին, որովհետեւ այս քաղաքն Անդրկովկասի 19-րդ դարի ամենախոշոր բնակավայրերից մեկն է եղել իր կշռով, բնակչությամբ: 19-րդ դարի երկրորդ կեսին Բաքվից, Թիֆլիսից հետո այն երկրորդ քաղաքն էր իր մեծությամբ: Նրանք փորձել են նաեւ սեփականացնել Շուշիի պատմությունը: Դրանից շեղվելով՝ եւ նպատակ դրեցին, որպեսզի ուսումնասիրեն, թե Շուշին ընդհանրապես իրենից ի՞նչ է ներկայացրել, ի՞նչ է տվել հայությանը: Մանավանդ՝ պատասխանել արդեքանիցների այն տեսակետին, թե Շուշին իբր ստեղծվել է Փանահ խանի կողմից, 19-րդ դարի երկրորդ կեսին, հիմնական նպատակ հետապնդելով՝ ցույց տալ, որ այս ամրոց-բնակավայրը հազարամյակների պատմությունն ունի: Կարծում եմ, որ դա ինչ-որ չափով ինձ հաջողվեց: Հայկական, ռուսական, արաբական մատենագիրների, թուրքական աղբյուրների, 19-րդ դարի մամուլի, արխիվում պահպանված նյութերի, ինչպես նաեւ ՀՀ-ում, ՌԴ-ում, Վրաստանի պատմության արխիվում պահպանված նյութերի հիման վրա ներկայացրել եմ այս բերդաքաղաքի ամբողջական պատմությունը՝ առավել ուշադրություն դարձնելով նաեւ առաջին հազարամյակից մինչեւ 1850-ական թթ. Շուշիի պատմության վրա:

Այնուհետեւ, նպատակ ունեի ցույց տալ, թե Շուշին ի՞նչ տվեց հայությանն ու հայ մարդուն: Առաջին հերթին՝ հաջողվեց ցույց տալ, որ ողջ 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբներին Շուշին դարձավ հայ գործարար խավի ամենակարեւոր միջավայրերից մեկը, որտեղից տնտեսական նոր համակարգերին հատուկ մտածելակերպը նրանք տարածեցին նաեւ Անդրկովկասում եւ հարակից երկրներում: Հայ գործարար խավի մի մասը, որ կրթություն, դաստիարակություն էր ստացել այստեղ, տեղափոխվեց եւ լայն գործունեություն ծավալեց Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, ընդհուպ՝ մինչեւ Հնդկաստան: Այս տնտեսական մեծ պոտենցիալը հնարավորություն տվեց, որպեսզի քաղաքը բարգավաճի, զարգանա ու ստեղծվի քաղաքացիական մի հասարակություն,


որտեղ հայ մարդը սկսեց զբաղվել նաեւ բարերարությամբ. ստեղծվեցին բարեգործական հաստատություններ, հայ բարեգործները մեծ ներդրում ունեցան քաղաքի մշակութային, կրթական կյանքի հունավորման, զարգացման վրա:

Մի հետաքրքիր բացահայտում էս: Հայ մարդու այս տնտեսական բարեկեցությունը նաեւ հնարավորություն տվեց, որպեսզի Շուշիում ապրող մյուս ազգային փոքրամասնությունները՝ թաթարները, թուրքերը, որոշակիորեն զարգացում ապրեն: Գաղտնիք չէ, որ թուրքերը խարխափում էին տգիտության մեջ:

Հայ մարդը ոչ միայն իր համար դպրոց, թատրոն բացեց, այլ, միաժամանակ, նպաստեց, որ թուրքերն էլ ներգրավվեն մշակութային այդ եռուկռոնի մեջ:

Շուշին դարձավ նաեւ հայկական մշակույթի խոշոր օջախներից մեկը, որտեղ սկսեց զարգանալ հայկական մշակույթը: Մշակութային նորարարությունը տարածվեց նաեւ հայկական մյուս բնակավայրերում եւ հեռու գաղթօջախներում: Եվ պատահական չէ, որ հայ մեծանուն գործիչներն այստեղ են հավաքվել (Ղազարոս Աղայան, Պերճ Պռոշյան, Լեւոն Սարգսյան, Սեդրակ Մանդիլյան, ծնունդով շուշեցի՝ Լեո) ու իրենց գլուխգործոցների մի մասն ստեղծել այստեղ: Մարդիկ, որոնք մեծ դերակատարություն են ունեցել ընդհանրապես հայ մարդու հոգեկերտվածքն անխաթար պահելու, հայկական մշակույթը, գիտությունը զարգացնելու տեսանկյունից:

Բացահայտումներից մեկն էլ նրա մեջ է կայանում, որն աշխատանքի մեջ ցույց



տրվեց, որ Շուշին դարձել էր նաեւ ազատության գաղափարակիր: Առաջին անգամ շուշեցի գործիչները, Շուշիում կրթություն ստացած գործիչները հայ իրակաության մեջ տարածեցին այն գաղափարը, որ հայ մարդն իրավունք ունի պայքարելու իր ազատության, իր անկախության համար, եւ այս գաղափարի հիմքերի վրա էլ հետագայում նրանք առաջ քաշեցին պետություն ունենալու գաղափարը: Այսօրվա համար դա կարող է սովորական բացահայտում լինել, բայց սա կարելու է, որովհետեւ միջնադարյան խավարի մեջ խարխափող, պետականությունից զրկված, ստրկամտության մեջ պարուրված հայ մարդու համար կարելու է ցույց տալ, որ նախանցալ ժամանակներում ունեցել են պետականություն, եւ այն կարելի է վերականգնել: Պատահական չէ, որ այս գաղափարները ոչ միայն տարածվեցին Արեւելյան Հայաստանում, այլ նաեւ՝ Արեւմտյան Հայաստանում: Ըստ Ռուբենի՝ եթե Արեւմտյան Հայաստանի ազատագրական շարժման արմատները արեւմտա-

հայ ծագում ունեցող ֆիդայիներն էին, ապա նրա հյուսիսային պատվաստները զարմանալիորեն արցախցի էին, մանավանդ՝ Շուշից եկած (Արամ Մանուկյան, Վանա Իշխան):

Այստեղ սկսվեց նաեւ, այսպես կոչված, սահմանադրական շարժում: 19-րդ դարի 40-50-ական թթ. Ռուսաստանն ապրում էր ճորտատիրական ժամանակահատվածում, եւ պատահական չէ, որ ամբողջ 19-րդ դարում ցարական իշխանությունները պայքարում էին Շուշիում ձեւավորված ազատամիտ գաղափարների դեմ: 20-րդ դարում մի նոր իրավիճակ ստեղծվեց, եւ այստեղ Շուշին նորից առաջնակարգ դիրքում էր: 19-րդ դարից եկող այդ գաղափարների շարունակությունը կարծես թե իր արտացոլումը ստացավ 1918-20թթ., երբ շուշեցի գործիչները, դեռեւս մինչեւ Անդրկովկասում 3 հանրապետությունների ձեւավորվելը, 1917թ.՝ մանավանդ ՀՀԴ Ապառաժի կառույցի շնորհիվ, որն իր շուրջը համախմբեց մյուս կուսակցություններին, ձեւավորեցին պետականություն: Սա անչափ կարեւոր է ոչ միայն գիտական տեսանկյունից, այլ նաեւ քաղաքական, որովհետեւ արդեքանցիները եւ նրանց սատարող ուժերը խոսում են Արդեքանի տարածքային ամբողջականության մասին, որը ոչ մի պատմական հիմք չունի:

Ցավոք սրտի, խորհրդային ժամանակահատվածում Շուշին գործում էր ընդդեմ հայության, որովհետեւ գտնվում էր Արդեքանի գերիշխանության տակ: 1920թ. շարժերից հետո հայ մարդը լքեց այս բնակավայրը, եւ այն բաժին հասավ թուրքին: Արցախյան շարժման սկզբնափուլում այն մեզ համար դարձել էր մահաբեր գեղք՝ անընդհատ կրակի տակ պահելով Ստեփանակերտն ու հարակից հայկական բնակավայրերը: Փառք Աստծո՛ւ՝ հաջողվեց 1992թ. մայիսի 9-ին ազատագրել Շուշին, եւ սկսվեց Շուշիի զարգացման, իմ գնահատմամբ, 6-րդ պատմափուլը, որն արդեն գործելու է ի նպաստ հայության: Նորից վերականգնվելու են այն ավանդույթները, որ դարեր շարունակ հայ մարդն ստեղծել է այս բերդաքաղաքում:

- Պարոն Բալայան, ի՞նչպես կգնահատեիք Շուշիի ազատագրումը: Այն ի՞նչ նշանակություն ունեցավ Արցախյան պայքարում:

- Շուշիի ազատագրումը մեր վերջին հազարամյա պատմության ամենակարեւոր իրադարձություններից մեկն է, եթե ոչ՝ ամենանշանակալորը, որովհետեւ այդ ժամանակից սկսած ոչ միայն հայ մարդու կյանքը փոխվեց, միաժամանակ նաեւ՝ պատմական արդարությունը վերականգնվեց, հայկական պետականության ձեւավորման եւ հզորացման սկիզբը դարձավ: Շուշիի ազատագրումը հնարավորություն տվեց իրականացնել բազում սերունդների երազանքը՝ ունենալ անկախ պետականություն: Չնայած մինչ այդ հռչակվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Շուշիի ազատագրումը դրան իմաստ փոխանցեց: Դա ոչ միայն հնարավորություն տվեց, որպեսզի բացվի կյանքի ճանապարհը դեպի Հայաստանի Հանրապետություն, այլ, միաժամանակ, մեր ռազմական հաջողությունների սկիզբը դարձավ: Այս ճակատամարտում կոփվեց հայ մարդու, հայ զինվորի կամքը, որ հասկացավ, որ ինքը կարող է քիչ ուժերով մեծ խնդիրներ լուծել, որ 21-րդ դարում նորից ու նորից առավել շատ վճռական է ոգին, նպատակաուղղվածությունը: Սա սերունդներին թողնված դաս է, որ պետք է առնեն ու անցնեն առաջ:

Առաջիններից մեկը, որ մտել է Շուշի



Այս օրերին ամբողջ հայությունը տոնում է Շուշիի ազատագրման և Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի կազմավորման 25-ամյակը: Հաղթանակների մասին խոսելիս՝ շատ դեպքերում հիշվում ու մեծարվում են միայն անվանի դեմքերը, հրամանատարները, եւ մոռացության տրվում շարքային զինվորները, կամավորականները, ովքեր անտրտունջ տարել են պատերազմի ողջ դառնությունները, դժվարությունները, պատերազմից հետո էլ շարունակում են ապրել ու արարել իրենց ազատագրած հողում եւ չեն հավակնում ճանաչման ու մեծարման, որովհետեւ գիտակցում են իրենց արածի կարեւորությունը ու անհրաժեշտությունը: Հենց այսպիսի սկզբնականների շնորհիվ է հայրենիքը պաշտպանվում ու շենանում:

17 տարեկանից Արցախյան ազատամարտի ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցած, Շուշիի ազատարարներից՝ Էդուարդ Աղաջանյանը ծնվել է 1971թ. Ստեփանակերտ քաղաքում, ավարտել Ստեփանակերտի 3-րդ դպրոցը, հետո ընդունվել Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջը: Ուսումնարանի սան էր, երբ սկսվեց Արցախյան շարժումը, եւ 6 ընկերներով տարբեր ձեռնարկներ էին իրականացնում՝ հայկական գյուղերի պաշտպանությունից մինչեւ տրանսպորտի, ուսելիքի ու զենքի հայթայթում:

Սովորել է Երեւանի Բաբաջանյանի անվան ուսումնարանում. ակորդեոն էր նվագում: Իսկ երաժշտական ուսումը շարունակելու համար 1989թ. Երեւան տեղափոխվել խորհուրդ էր տվել Սայաթ-Նովայի ան-

վան քոլեջի տնօրենը, որովհետեւ շարժման ակտիվ մասնակիցներին ռուսները հետապնդում էին:

Մի տարի սովորելուց հետո պիտի շարունակեր ուսումը, բայց համապատասխան մասնագետներ չկային: Ուղեգիր են տրամադրում Մոսկվայում ուսումը շարունակելու համար, բայց չի գնում Արցախյան շարժման ծավալման պատճառով: Ասում էր՝ ավելի լավ է այստեղ մնամ:

Հայաստանյայց առաջելական եկեղեցու Արցախի թեմի կազմավորումից հետո, երբ Գանձասարում եկեղեցական երգչախումբ պետք է ստեղծվեր (այդ ժամանակ Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում էր) ընդգրկվում է առաջին երգչախումբում:

Ընկերներով միացել էին ցեղակրոնների խմբին, հետո մտել են Դաշնակցության ջոկատը: Դաշնակցության շարքերն է անցել 1989թ.: 2 ընկերներով, որպես խմբի «ներկայացուցիչներ», երգում են տվել, իսկ մնացածներն էլ Էդուարդի խոսքերով՝ «միշտ Դաշնակցության հետ ենք»: Երդման արարողությունը կուսակցությունից ներկա էին ժաննա Գալստյանը, Վալերի Բալայանը, Վալերի Դազարյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Սարգսյանը: Խոսելով ՀՀ-ին անդամակցության մասին՝ նշում է, որ կուսակցության մեջ շատ ընկերներ է ունեցել, որոնց մեծ մասը զոհվել կամ մահացել է: «Եթե կուսակցությունից հեռանում, ինքս ինձ չեմ հարգի: Շատերն են եղել մեզ հետ, բայց ինչ-ինչ պատճառներով հեռացել են», - նշում է Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեության խմբերից մեկի խմբապետը:

Արցախյան շարժման ծավալումից հետո Էդուարդ Աղաջանյանն ընկերների հետ միացել է Դարաբաղում Աֆղանստանի վետերանների միության անդամներին:

Որոշ ժամանակ ընկերների հետ Արկադի Կարապետյանի ղեկավարությամբ Դահիրազ գյուղում ռազմական պատրաստություն են ստացել:

Սկզբում մասնակցել է Փառուխի, Նախիջեանիկի, Տոդի ազատագրմանը, այնուհետեւ Մալիբեյլի, Խոջալուի համար մղված մարտերին, Զարին տակի հերոսամարտին, իսկ Կրկժանի ազատագրման ժամանակ ոտքից վիրավորվել է: Այնուհետեւ միավորվել են Բեկորի ջոկատին: Շատերը կամաց-կամաց, ճանաչելով Բեկորին, միացել են, կազմել առաջին վաշտը: «Այն ժամանակ միակ փրկությունը

գեղքն էր: ՕՍՏՆ-ի, ռուսների դեմ էինք կռվում», - ասում է Էդուարդը: Խաղաղ ցույցերի, միտինգների ժամանակ էլ հայկական բնակավայրերի մոտ զինված հսկողություն էին սահմանել, որպեսզի հայերին գերի չտանեն, չթալանեն: «Այն տարիներին միս գտնելը դժվար էր, եւ ընկերներով մտնում էինք թուրքական գյուղեր՝ ոչխարներ, այլ անասուններ բերում ժողովրդի համար», - ասում է ազատամարտիկը:

Սեփական նախաձեռնությամբ մտածված եւ հաջողությամբ իրագործված դեպքերն անհամար են: Չենք միշտ քչություն էր անում, եւ մի քանի հոգով որոշում են Ստեփանակերտի Ռուսական ոստիկանական գնդից վերցնել: Շրջապատում են շենքը, մտնում ներս: Հարցին, թե արդյո՞ք հաջողությամբ ավարտվեց մտահոլացումը, ազատամարտիկը ինքնագոհ ժպիտով պատասխանում է՝ շատ մեծ հաջողությամբ. ամբողջ զենքը վերցրել ենք:

Ավտոմեքենա էր պետք, որն այն ժամանակներում հատուկնետ մարդիկ ունեին, եւ ահա միտք է հղանում վերցնել արդբեջանցի դատախազի «Ուազ» մակնիշի ավտոմեքենա: «Հանգիստ նստել եւ տարել ենք մեքենան, իսկ կողքին կանգնած թիկնապահներն էլ գիտեին, թե իրենց վարորդներից ենք», - պատմում է Էդուարդը: Մեքենայի մեջ արժեքավոր փաստաթղթեր էլ կային: Արդբեջանցիների խնդրանքով ավտոմեքենան օգտագործելուց հետո հետ են տալիս՝ գերի գյուղացիներին ազատելու դիմաց:

Մարտերում թրծված մարտիկը չի կարողանում հուզվումը թաքցնել, երբ պատմում է ընկերոջը կորցնելու մասին: Չամփլուի մարտերում կորցրել է մոտիկ ընկերներից մեկին՝ Նելսոն Չաքարյանին: Նելսոնը օգնության էր շտապում՝ մարտի դաշտից դուրս բերելու վիրավոր ուղեկցողին: Նրան հանում է այնտեղից, փրկում, բայց ինքը զոհվում:

«Բեկորի հետ միասին ամենադժվար մասով ենք բարձրացել, Շուշի ուղղությամբ, Շուշիի բանտի տակով: Մայիսի 8-ին մարտեր էին ընթանում բանտի մոտ, իսկ երբ մտել ենք բանտը, այնտեղ արդեն մարդ չկար», - Շուշիի ազատագրումն այսպես է նկարագրում մեր գրուցակիցը:

Առաջիններից մեկն է, որ մտել է Շուշի, իսկ «Շուշիի ազատագրման համար» մեդալը ազատագրումից 18 տարի հետո է ստացել: Ազատամարտիկի համար ցավալի է, որ Շուշիի ազատագրմանը մասնակցել

են մի քանի 100 մարդ, բայց հիմա այդ մեդալից հազարավոր մարդիկ ունեն:

Պատերազմից հետո Շուշիում, հովանավորների աջակցությամբ, որոնք ցանկանում էին ազատագրված քաղաքում դպրոց կառուցել, հիմնվել է երաժշտական դպրոց: Շինարարության պատասխանատուն, այնուհետեւ նաեւ դպրոցի տնօրենը Էդուարդ Աղաջանյանն էր: 1995-2002թթ. եւ դպրոցի, եւ շինարարության ղեկավարն էր, որովհետեւ դպրոցի կեսը շահագործման հանձնվելուց հետո է կառուցվել:

Որոշ ժամանակ աշխատել է հայկական գյուղերում, բուժկետների վերանորոգմամբ զբաղվող հիմնադրամում, որի շինարարության գծով պատասխանատուն էր: Դրանից հետո, մեկ տարի Արցախի ազգային վիճակախաղի կողմից Իշխանաձորում կառուցվող տների շինարարության պետն էր:

Արցախյան ազատամարտի բովով անցած մարտիկն այժմ անգործ է:

Նախորդ տարի ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ էլ առաջին գծում էր: «Մեր հայրենիքում ապրում ենք, մեր հողերը պիտի պահենք, կռիվ կլինի՝ կկռվենք: Գնալու տեղ չունենք», - կարծում է Էդուարդը: Որդիներից մեկը՝ Տիգրանը, անցած տարվա ապրիլին ժամկետային զինծառայող էր՝ նույնպես առաջին գծում, իսկ ինքը թալիշում էր. ընկերներով որոշել էին ամենաթեժ մասը պահել:

Ամուսնացել է 1995թ., ունի երեք զավակ՝ երկու տղա եւ մեկ աղջիկ (Տիգրան, Արիս եւ Մարիա): Ինչպես ամեն ծնող, նա էլ իր երեխաների համար լավ ապագա է ցանկանում հայրենիքում՝ «գիտելիքներ ստանան, զարգանան ու ծառայեն հայրենիքին»: Իսկ արտասահմանում ապրող հայերի աջակցությունն Արցախին օգնություն է չի համարում, այլ յուրաքանչյուր հայի պարտականություն:

Ի դեպ, Մայիսյան եռատնի առթիվ Էդուարդ Աղաջանյանն Արցախի Հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Հ.Գ. Հարցազրույցի ամբողջ ընթացքում գրուցակիցս դեպքերին իր մասնակցության մասին չէր ուզում խոսել, անընդհատ շեշտում էր ընկերների անունները: Իր մասին չի սիրում խոսել. համոզված ենք՝ իր կատարածի մի փոքր մասն է մեզ հասու դարձրել: Իսկ ինչքան էր նա կա ստելու...

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Բուժքույր Լիդան



Պատերազմի մասնակից կանայք ու աղջիկները երբեք չեն պատմում, որ երբեմն վիրավոր են շալակած դուրս բերել, երբեմն էլ՝ վիրավորից ավտոմատը վերցնելով՝ սկսել են կրակել...

Բուժքույր Լիդա Աղաբեկյանին հանդիպեցի իր աշխատավայրում՝ Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում: Լիդան ե՛ւ հարցերիս էր պատասխանում, ե՛ւ վիրահատարանի համար բանբակից բժշկական գլանակներ պատրաստում:

- Լիդա, ինչպե՞ս որոշեցիք բուժքույր դառնալ:

- Ընդհանրապես բժշկությունից հեռու էի, որոշել էի դպրոցն ավարտելուց հետո փաստաթղթերս հանձնել սննդի արդյունաբերության տեխնիկում: Սակայն մի օր մեր բարեկամներից մեկն ինձ հարցրեց, թե ինչ եմ որոշել դառնալ, ասացի մտադրությունս մասին, նա ինձ խորհուրդ տվեց. «Ի՞նչ գործ ունես դրա հետ, ավելի լավ է՝ գնա բժշկական տեխնիկում, գոնե կկարողանաս մի բան եղած դեպքում երեխաներիդ օգնել, սրսկել»: Այդպե՛ս: Չեմ փոշմանում. շատ ուրախ եմ, սիրում եմ իմ մասնագիտությունը:

- Առաջին անգամ ե՞րբ առնչվեցիք պատերազմի հետ:

- Նոր էի ընդունվել գործի: Մի օր բժիշկ Մարությանը եկավ հանրապետական հի-

վանդանոց, ասաց՝ «Վաղը տեղ ենք գնալու, բայց գիշերը հետ չենք գալու, ոչ մեկին ոչ մի բան չասեք: Դե, արդեն կասկածում էի. չգիտեի ուր ենք գնում, բայց գիտեի՝ ինչի համար ենք գնում: Ասացի՝ նոր եմ եկել վիրահատարան, գործս լավ չգիտեմ, ասաց՝ ինչքան գիտես, դա ինձ հերիք է, մնացածը ընթացքում կսովորես»: Առաջին մկրտությունս ստացա Հաղորդի շրջանում. Տոդ գյուղի ազատագրումն էր: Բացի Մարությանից հետո աշխատեցի Մովսիսյանի, Բազյանի հետ: Իմ գործը մշտապես վիրաբույժների հետ է եղել:

- Ի՞նչ զգացողություններ կան այդ տարիներին:

- Տխուր օրեր էին: Տխուր ու, միաժամանակ, հերոսական: Կարծես թե վախը մեր միջից դուրս էր եկել... Երբ Մարտակերտի գյուղերը թուրքերը գրավել էին, բուժօգնության մեր մեքենան անընդհատ ռմբակոծում էին օդից: Մի անգամ էլ, հիշում եմ, թուրքերը դիվերսիա արեցին: Ես ու ընկերուհին էինք, ու ծանր հիվանդ կար հետներս: Նա քայլել չէր կարողանում. չէինք կարող թողնել-հեռանալ: Նռնակը

դրել էինք մեջտեղը ու սպասում էինք. մտածում էինք՝ որ թուրքերը գան, նռնակը կպայթեցնենք, գերի չենք ընկնի: Այն տարիներից կարելուրում եմ միասնությունը, համախմբվածությունը, իրար նկատմամբ հոգատարությունը, սերը. մարդկային արժանիքներն ավելի մեծ տեղ ունեին, քան հիմա է: Այդ տեսանկյունից երանի եմ տալիս այն տարիներին:

- Մինչեւ ե՞րբ եք մասնակցել պատերազմական գործողություններին:

- Մինչեւ պատերազմի, այսպես ասած, «ավարտը», բայց բանից պարզվեց՝ դա բոլորովին էլ ավարտ չէր:

Դեռ վիրահատարանում եմ աշխատել, թոշակի անցել, նորից վերադարձել վիրահատարան՝ իմ նախկին գործին: 91-ից մինչ այժմ այստեղ եմ աշխատում:

Լիդան արժանացել է «Շուշիի ազատագրման համար», «Մարտական ծառայության համար» մեդալների. ընդհանուր թվով՝ ունի 10 մեդալ:

Հարցազրույցը՝ Լ. Բաղդյանի

Շուշիի ազատագրմամբ մենք ապահովեցինք ամբողջ Արցախի անվտանգությունը. Արտաշես Մխիթարյան



Մեր հաղթանակներին 25 տարի առաջ ավելացավ հաղթանակների հաղթանակը՝ ազատագրվեց Շուշին, կազմավորվեց ԼՂՀ Պաշտպանության բանակը: Համաձայն մեր քաղաքը կրկին դարձավ մերը, թե՛ ես՝ ավերակ, բայց՝ ազատ: Այն մերն է՝ շատ ու շատ ազատամարտիկների արյան, արցունքի ու քրտինքի գնով: Շուշիի ազատագրման մասնակից է եղել Շուշիի առանձնակի գումարտակի նախկին շտաբի պետ, ՀՀ ԳՍ ազատամարտիկների հարցերով հանձնախմբի ղեկավար Արտաշես Մխիթարյանը:

25 տարի անց՝ մայիսի 8-ի, լույս 9-ի գիշերը Արտաշես Մխիթարյանը Շուշիի տանկ-հուշարձանի մոտ էր՝ ավանդական պատվո պահակության: Նա երիտասարդներին է ներկայացրել Շուշիի ազատագրման նախապատրաստական աշխատանքները, ընթացքը եւ խոսել ՀՀ ԳՍ-ի կողմից ստեղծված պահեստագործի կարեւորության մասին:

«Գրեթե ամեն օր հրթիռահրետակոծվում էին Ստեփանակերտը եւ շրջակա հայկական բնակավայրերը: Նախ հարկ էր լռեցնել Ստեփանակերտը եւ նրա հարակից բնակավայրերը հրետակոծող ադրբեջանական կրակակետերը: Թիվ մեկ կրակակետը շարունակում էր մնալ Շուշին. այդտեղից Ստեփանակերտի վրա

օրական առնվազն 300-350 հրթիռ եւ ռումբ էին թափվում: Ստեղծված իրավիճակը միայն մի ելք ուներ՝ վերցնել Շուշին եւ ցամաքային կապ ապահովել Հայաստանի հետ», - պատմում է Ա. Մխիթարյանը:

Շուշիի ազատագրման պլանը 1992-ի մարտ-ապրիլ ամիսներին խիստ գաղտնիության պայմաններում կազմվել է ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադեոսյանի կողմից: Ա.Մխիթարյանի խոսքով՝ Շուշին պատուհաս էր դարձել ողջ արցախահայրության համար եւ Շուշիի ազատագրմամբ մենք ապահովեցինք ամբողջ Արցախի անվտանգությունը:

«Ըստ հետախուզության տվյալների՝ Շուշիում եւ նրա պաշտպանական թեւերում կենտրոնացած էր հակառակորդի մոտ 2500 զինվոր: Այնինչ 40 կմ երկարությամբ ճակատում մենք ունեինք ընդամենը 3500 կամավորներ, եւ դա այն պարագայում, երբ հարձակվող կողմը պաշտպանվող կողմից պետք է ունենա նվազագույնը 3 անգամ ավել անձնակազմ», - ասում է ԱզՄխիթարյանը եւ նշում, որ ապրիլի 28-ին արդեն վերջնականապես որոշվել էր Շուշիի հարձակման գլխավոր ուղղությունները, հրամանատարները, առկա գեներալները եւ զինամթերքի քանակը, պատրաստվել էր մարտական հրամանները:

Ըստ մարտական հրամանի՝ Շուշի կամ արեւելյան ուղղության հրամանատար է նշանակվել Արկադի Կարապետյանը, «26-ի» կամ հյուսիսային ուղղության հրամանատար՝ Վալերի Զիբյանը, Լաչինի կամ հարավային ուղղության հրամանատար՝ Սամվել Բաբայանը, Քյոսսլարի կամ հյուսիսարեւմտյան ուղղության հրամանատար՝ Սեյրան Օհանյանը:

«Եվ ահա, երկամսյա նախապատրաստական աշխատանքներից հետո տրվում է հրամանը՝ մայիսի 8-ի գիշերը, ժամը 2.30-ին անցնել հարձակման: Պետք էր միայն տեսնել այն ոգեւորությունը, որ տիրում էր Շուշիի ազատագրման գործողության մեջ ներգրավված կամավորականների շրջանում: Նրանք քաջ գիտակցում էին, որ գնում են խելահեղ քայլի, գնում են դեպի մահ իմացյալ, բայց այդ մահն ավելին չէր, քան հայրենիքը, հավատի սիրբությունը, ազատությունը եւ ազգի արժանապատվությունը: Այնքան մեծ էր այդ ոգեւորությունը, որ կարծես ամբողջ աշխարհը կարող էր լսել նրանց խոսքը: Յուրաքանչյուրը իր փայտից փայտից էր հավաքվել Շուշիի շուրջը: Հայկական կողմը, խուսափելով ավերի ու զոհերի տալուց, բացեց Շուշի-Լաչին ճանապարհը եւ չխոչընդոտեց ադրբեջանցիների փախուստը»:

Այսպիսով, մայիսի 9-ի կեսօրից հետո, ժամը 4-ին հակառակորդի վերջին զինվորները լքեցին Շուշին, եւ առավոտյան հայ զինյալները մուտք գործեցին հայոց հինավուրց քաղաքը: Ազատագրվեց Շուշին՝ հնամյա, տանջահար ու վիրավոր: Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու ավերված գմբեթին ծածանվեց հայոց եռագույնը, եւ մոմի բույրը բարձրացավ եկեղեցու պատերն ու կամարներն ի վեր:

«Վերջապես մեր խաղաղ ազգաբնակչությունը դուրս եկավ նկուղներից եւ կարողացավ առօրյա կյանքով ապրել», - նշել է Ա.Մխիթարյանը:

Ազատամարտիկի խոսքով՝ Շուշիի ազատագրումից 25 տարի անց՝ 2016-ի ապրիլին մենք պատրաստ չէինք, սակայն ապրիլը մեծ դաս էր:

«Հող տվողն էլ, կռվողն էլ ժողովուրդն է: Եթե ժողովուրդը նույն ապրիլին մեկ մարդու նման կանգնած էր, ոչ մի դիվանագետ, երկրի ղեկավար չի համարձակվի որեւէ թուրք ստորագրել, որովհետեւ շատ լավ գիտի, որ դա լինելու է իրենց

վերջը: Եթե մենք կարողացել էինք 91-92 թվականների դժվարությունները հաղթահարել եւ հաղթանակած դուրս գալ, հիմա նույն ձեւ կլինի», - ասել է նա:

Խոսելով ՀՀ ԳՍ-ի կողմից ստեղծված պահեստագործի կարեւորության մասին, պահեստագործի գնդապետ Արտաշես Մխիթարյանը նշել է, որ գումարտակը հետագայում մարտի դաշտում գործելու է Պաշտպանության նախարարության հետ համաձայնեցված:

«Ապրիլյան դասերը մեզ ստիպեցին, որպեսզի սպառնալից ժամանակահատվածում ձեւավորենք գումարտակ, որպեսզի պատրաստ լինենք՝ լայնամասշտաբ գործողությունների վերսկսման դեպքում ավելի կազմակերպված, ավելի արագ օգտակար լինել սահմանների պաշտպանության գործին:

Արտաշես Մխիթարյանն ընդգծեց, որ հակառակորդը ցանկացած պահի կարող է սարսափների դիմել. պատահական չէ ասված՝ եթե խաղաղություն եւ ուզում, պիտի պատրաստ լինես պատերազմի:

«Հիմա ստորաբաժանումների ձեւավորման աշխատանքներ են ընթանում, կամավորները ըստ մարզերի բաշխվում են ջոկերի, վաշտերի: Աշխատանքների ավարտից հետո կսկսենք անցկացնել վարժական հավաքներ՝ համաձայնեցված Պաշտպանության նախարարության հետ: Յուրաքանչյուր զինվոր իմանալու է իր տեղը մարտի դաշտում, խրամաքիցը, իր կրակի ուղղությունը, հակառակորդի հարձակման հավանական ուղղությունը», - մանրամասնել է նա:

«Հիմնականում մինչեւ 45 տարեկան տղաներ են: Կորիզը, այսինքն՝ նախաձեռնողները, հիմնադիրները «Շուշիի» առանձնակի գումարտակից են», - շեշտել է նա:

«Կուսակցական պատկանելիության խնդիր չկա. քաղաքացի հարցերում երբեք չի հուղվելու գումարտակի անունը, դա բացառված է», - եզրափակել է Արտաշես Մխիթարյանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Խոսում են մասնակիցները



Անհնար է մեզ հետ ռազմական ճանապարհով հարցեր լուծել. Արթուր Եղիազարյան

Արցախյան գոյամարտի մասնակից Արթուր Եղիազարյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում ասաց, որ Շուշին նպաստել է իր ինքնազարգացմանն ու տեսակի ձեւավորմանը: Այստեղ նաեւ ձեւավորվել է իր ընտանիքը: Երեք որդի ունի, երկուսը Շուշիի ազատագրումից հետո

այնտեղ ծնված առաջին երկվորյակներն են

Ա.Եղիազարյանը կռվել է Շուշիի առանձնակի գումարտակում: Հիմա էլ հպարտանում է իր մարտական ընկերներով. պատերազմում կորցրած ցանկացած ընկերոջ կորուստը շատ թանկ է նրա համար:

Նրա խոսքով՝ ամեն մի դիրքային հաղթանակ, հողի ազատագրում մեծ նշանակություն ուներ մարտում կռվողների համար, սակայն արցախյան գոյամարտում ամենակարեւորը Շուշիի ազատագրումն էր, որն էլ պայմաններ էր ստեղծում, որ Արցախը վերամիավորվեր Հայաստանին: Հիմա էլ, արցախյան պատերազմի մասնակցի հաղթանակը պահելու, խաղաղ ապրելու համար պետք է միշտ պատրաստ լինել պատերազմի:

«Սա վախենալու միտք չէ: Պատերազմին պատրաստ լինելը չի նշանակում տենչալ պատերազմ: Մեր հակառակորդները պետք է հասկանան, որ անհնար է մեզ հետ ռազմական ճանապարհով հարցեր լուծել: Մենք մեր ռազմական պատրաստվածությամբ պետք է հակադրենք, որ այս հարցը խաղաղ ճանապարհով լուծվի», - ասում է Ա.Եղիազարյանը:




Միայն ուժեղ պետություն ունենալու դեպքում իրավունք կունենանք խոսել նոր հաղթանակների մասին. Սամվել Թադեոսյան

«25 տարի առաջ այս օրը մեր ազգի հավաքական ներդրման արդյունքն էր: Գյուղացին, բժիշկը, գիտնականը, զինվորը, սփյուռքահայը, բարերարը համախմբվեցին Արցախի հողը ազատագրելու համար, եւ Շուշիի հաղթանակով սկսվեց մեր հաղթարշավը, - «Ապառաժ»-ի թղթակցի հետ զրույցում ասել է սցենարիստ, ռեժիսոր Սամվել Թադեոսյանը:

Ս. Թադեոսյանի խոսքով՝ մենք պետք է գգն եւ սթափ կշռադատենք կատարվելիքը:

«Մենք պետք է համախմբենք մեր ուժերը, հավատարիմ լինենք մեր կոչմանը, մեր առաքելությանը եւ մտավախությամբ մոտենանք թվացյալ դաշնակիցներին: Աշխարհը չի պարկեշտացել, ամեն մեկն իր գործերով է զբաղված եւ արտաքուստ սիրալիք ժպիտների տակ օձեր են թաքցնում, որոնք թվում է, թե մեզ բարեկամ են, բայց մեզ խոցում են դիմացից, թիկունքից, նենգության բոլոր օրենքներով», - ասել է Սամվել Թադեոսյանը եւ շեշտել, - հողը եթե քրտնիքով, սիրով չես ջրում, խռովում է քեզանից, ճաքճքում եւ անցնում թշնամու ձեռքը: 1991-ին մենք ապավինեցինք մեր ուժերին, պայքարեցինք մեր անկախության համար եւ հաղթեցինք: Այսօր միայն ուժեղ պետություն ունենալու դեպքում իրավունք կունենանք խոսել նոր հաղթանակների մասին»: → 7

Թուրքիայում ապրում է 4 միլիոն հայ. Հայկազուն Ալվրցյան



Թուրքիայի կրոնափոխ հայերի, նրանց խնդիրների և տեսանկյունի վտանգների մասին «Ապառաժ»-ը բացառիկ գրույց է ունեցել Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն-գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն, հայագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ալվրցյանի հետ:

Թուրքիայի կրոնափոխ հայերը

Թուրքիայի կրոնափոխ հայերն իրենց հայկական անցյալի նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեն, և ըստ այդմ էլ բաժանվում են երկու հիմնական խմբի:

Առաջին խմբի հայերը 1915 թվից ի վեր շարունակում են ապրել քրդերի կամ թուրքերի կողքին՝ որպես մուսուլմաններ: Սրանց հիմնական մասը մահմեդական ընտանիքներում դաստիարակված հոգեզավակների սերունդներն են: Եթե անգամ տեղյակ էլ են իրենց հայկական ծագման մասին, առանձնապես հակված չեն վերադառնալու այդ ինքնությանը: Հիմնականում հաշտվել են կատարված իրողության հետ և չեն փորձում իրենց համար բարդություն ստեղծել:

Երկրորդ խումբը կազմում են գաղտնի կամ ծպտյալ հայերը, ովքեր գիտակցում են իրենց ազգային պատկանելիությունը, այն գաղտնի կերպով փոխանցում են սերնդեսերունդ, իրենց ընտանիքներում պահպանում են հայկական ազգային որոշ սովորույթներ, ավանդույթներ և մշակութային տարրեր, հիմնականում խուսափում են օտարների հետ ամուսնությունից: Նրանք ամուսնանում են իրենց նման ծպտյալների հետ և նպաստավոր պայմաններում մկրտության ճանապարհով վերադառնում են հայկական ինքնությանը:

Ընդհանուր առմամբ՝ իսլամացածների թիվը հասնում է 3,5-4 միլիոնի, բայց ընդունում ենք, որ սրանցից մոտ 1,700-2 միլիոն են հավատարիմ մնացել իրենց անցյալին, ակունքներին և իրենց ինքնությունը վերականգնելու ձգտումներ ունեն:

Հայերի ծածկագիրը՝ 2

Թուրքիայում ապրող բոլոր ազգային

փոքրամասնություններն ունեն ծածկագիր: Եվ թեև իսլամացման գործընթացը հազարավոր հայերի փրկեց ցեղասպանությունից, սակայն Թուրքիայի ղեկավարությունը նրանց մասին երբեք չմոռացավ:

1915թ. հայերի իսլամացումն իշխանությունների կանգնեցրեց անսպասելիորեն ծագած խնդիրների առջև: Նրանք բնականաբար պետք է տեղաշարժվեին, ճամփորդեին, բայց իշխանությունները նրանց չէին վստահում: Անհրաժեշտություն առաջացավ կրոնափոխների անձնագրերում կատարել նրանց հայ լինելը հաստատող նշում: Հայերի ծածկագիրը 2 է, որով նրանք ամբողջությամբ վերահսկվում են երկրի ողջ տարածքում:

Տեսանկյունի վտանգներ

Թուրք ազգը 50 տոկոսից էլ քիչ է, և այս թվի մեջ քչերն են, որ իրենց թուրք են համարում: Այդ պատճառով Թուրքիայի ամենաթույլ տեղը այդ երկրում ապրող ազգային փոքրամասնություններն են, որոնց թիվը 50-ից ավել է: Սակայն Թուրքիան այսօր Օսմանյան կայսրության երբեմնի փառքը և տարածքները վերականգնելու մոլուցքի մեջ է:

Թուրքիայում տեղի ունեցած «հեղաշրջումը» և դրան հաջորդած հալածանքների ու հետապնդումների արդյունքում հայերի նկատմամբ ճնշումը եւս մեծացավ: Շատ վտանգավոր ժամանակներ են սպասում:

Սկսվել է քննարկվել Ռ.Էրդողանի հայ լինելու վարկածը: Ասում են՝ հայրն ու պապը հայ են, Էրզրումի նահանգում է ծնվել: Պապը փոքրուց ատելություն է ներարկել Թուրքիայի նկատմամբ, իսկ հիմա Էրդողանը վրեժխնդիր է լինում՝ Թուրքիային հանում է ամբողջ աշխարհի դեմ՝ պատժելու համար: Այսինքն՝ Թուրքիային այսքան վատ վիճակի հասցնող Էրդողանը հայ է:

Եթե նման վարկածներ են տարածում, նշանակում է՝ հայերի դեմ ինչ-որ բան է պատրաստվում, քանի որ հայ բառը Թուրքիայում հայիոյանքի է համարժեք: Մեկին վիրավորելու համար ասում են՝ հայի որդի:

Վերջին տարիներին մեծ թափ է ստացել նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչումը: Թուրքիայում եւս սկսել են ցեղասպանության մասին շատ խոսել, գրել, հիշատակել այդ օրը: Այդ ամենի դեմը հարկավոր է առնել, և հայերին պետք է եւս մի առիթով վախեցնել:

Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունի Թուրքիայի հետ, որ ճնշում գործադրի: Մեզ մտում է միայն միջազգային կազմակերպություններին և պետություններին զգուսության կոչ անել՝ նրանց ուշադրությունը բեռնել Թուրքիայում տեղի ունեցող զարգացումների վրա՝ իրավիճակը հնարավորինս մեղմելու համար:

Հայերի խոսափողը

Թուրքիայում ապրող հայերի պարագայում միայն հայկական արմատները բավարար չեն ազգությանը վերադառնա-

լու համար: Այդ գործընթացին ուղղորդող է պետք: Հրանտ Դինքն էր նրանց առաջնորդը, ում, ցավոք, Թուրքիայի իշխանությունները չեզոքացրին:

Հ. Դինքը Թուրքիայի իշխանությունների վախերի մեջ կարեւորագույնն էր: Նա կարող էր դառնալ խոսափող:

Հրանտ Դինքն այն կարծիքին էր, որ եթե Թուրքիան ժողովրդավար երկիր դառնա, հայերի թիվը եւս 2 միլիոնով կավելանա: Նա լրջորեն խոսում էր Թուրքիայում ապրող հայերի մասին, բարձրաձայնում էր և ցեղասպանվածների, և նրանց ժառանգների հարցը:

Բարեբախտաբար, այսօր Կարո Փալյանն է շարունակում Հրանտի աշխատանքը, և այն հավատով է անում՝ կազմակերպված, խելացի, հաշվարկված և համարձակ: Նա Հրանտ Դինքի արժանի հետևորդ է:

Թուրքիայից Հայաստան, թե՛ Հայաստանից Թուրքիա

Թուրքիայում ապրող հայերի զանգվածային հոսք դեպի Հայաստան չկա՝ երկու պարզ պատճառով: Նրանք ապրում են Արեւմտյան հայրենիքում, և Հայաստանի համեմատ Թուրքիայի կենսամակարդակն ավելի բարձր է: Թուրքիայի հայերը տնտեսապես բողոքելու խնդիր չունեն ու հենց այդ իսկ պատճառով Թուրքիան Հայաստանի հայերի համար եւս գրավիչ է:

Եթե Հայաստան տեղափոխվողների թիվը հատուկեւս է, ապա Հայաստանից Թուրքիա գնացողներին մասսայական բնույթ է ստանում: Անձնական ճշտված տվյալների համաձայն՝ Հայաստանից Թուրքիա տեղափոխված հայերն աշխատում են տարբեր հիմնարկներում և գործարաններում, և Հայաստանի առետրականների՝ Թուրքիայից բերված շորերն ու կոշիկները հենց հայերի պատրաստածներն են:

Հայերը Հայաստանում չէին կարող կոշիկ կարել: Հայաստանի հողերի միայն 30 տոկոսն է մշակվում: Մնացածը խոպան է: Հայաստանը դարձավ խոպան, իսկ մեր հայերենակիցները խոպանչի ուրիշի երկրում:

Կամ մենք՝ որպես ազգ պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ հոգևած ազգ ենք և այլևս անելիք չունենք այս աշխարհի վրա՝ ուժեղների կողքին, կամ՝ ազգը պետք է սթափվի և իրավիճակ փոխի...

Նախիջեւանի ապագան ենթադրող Ջավախք

Հայաստանին արտաքին աշխարհի հետ կապող 70 000 կիլոմետրանոց Ջավախքը Նախիջեւանի ճակատագրին է արժանանում: Ջավախքահայերի սոցիալ-տնտեսական խնդիրներին այսօր փոխարինեց մի այլ աղետ՝ Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա դաշնակցային հարաբերությունները: Վրաստանը բացել է իր բոլոր դռները Թուրքիայի առջև և թուրքերը հեղեղել են Ջավախքը:

Ջավախքում չլսված, չտեսնված բաներ են կատարվում: Հասարակաց տներ են բացվել, և եթե առաջ Ջավախքում ապ-

րող բոլոր ժողովուրդները խոսում էին միայն հայերեն, ապա այսօր թուրքական խոսք եւս լսում անընդհատ: Սա շատ վտանգավոր է, և վրացիները աշակցում են թուրքերին՝ չգիտակցելով, թե հետագայում դա ինչ փորձանք է դառնալու իրենց գլխին: Թուրքերն Աջարիայով մտել են, Ախալցխայով Ախալքալաք են շարժվում և կմիանան Ադրբեջանին: Հայաստանի շրջափակումը թուրքական աշխարհով կլինի 100 տոկոսանոց, որովհետեւ Պարսկաստանի հետ սահմանին նույնպես 18-20 միլիոն թուրք է ապրում:

Եթե մենք այն ժամանակ նվաճեցինք Գանձակը և փակեցինք Վրաստանի և Ադրբեջանի միջև հաղորդակցությունը, այսօր տարածաշրջանի թելադրող պետությունը մենք կլինեինք, ոչ թե Ադրբեջանը: Մեր սխալ քաղաքականությունը մեկնարկեց 1994-ի զինադադարի կնքումով, և այսօր մենք հայտնվել ենք փակուղում:

Միացյալ Հայաստանի խորհուրդող ճալապարհին

Մեր աշխարհասփյուռ ազգը երբեւ չի հրաժարվելու իր պետականությունը վերականգնելու գաղափարից: Միացյալ Հայաստան կերտելու ճանապարհին մենք նվաճեցինք առաջին հաղթանակը՝ Արցախը: Այսօր կայծեր են ցուլում Արեւմտյան Հայաստանում: Պետք է քաղաքական բարենպաստ պահ ստեղծվի, խորանան Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները, և մենք՝ որպես պետություն, պատրաստ լինենք այդ կայծերը կրակի վերածելու:

Հայկական հարցը, Հայ Դատը, Միացյալ Հայաստանը ստեղծելը հնարավոր կլինի նախ և առաջ այդ գաղափարի համար ռազմաքաղաքական, տնտեսական հենք ստեղծելով: Այդ հենքը հզոր պետությունն է: Աշխարհում պետք է ունենանք մեր գնահատելի կշիռը: Իսկ երկիրը կարելի է հզորացնել միայն երկրին նվիրված, երկրում աշխատանք ունեցող, լավ ապրող քաղաքացիներով:

Միացյալ Հայաստանի գործադրման փուլում մենք այս հարցերին պետք է լուծում տանք: Հայաստանն ու Արցախն են համայն հայության ապագան: Այստեղից պետք է սկսվի համայն հայության համար հզորացման, ուժեղացման, հզոր պետություն ստեղծելու, մեր ազգային ծրագրերն իրականացնելու և գործադրվելու պրոցեսը: Սփյուռքը միայն մի դեպքում է ուժեղ, երբ նրա ուժը հանուն հայ ժողովրդի է՝ Հայաստանի:

Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն-գիտահետազոտական հիմնադրամը ստեղծվել է 2006 թվականին, ՀՀԴ Բյուրոյի նախաձեռնությամբ:

Կենտրոնի հիմնական նպատակն է՝ ծանոթանալ Արեւմտյան Հայաստանի և այնտեղ ապրող հայության խնդիրներին:

Կենտրոնն ունի նաեւ հայալեզու և թուրքալեզու երկու կայք՝ «Ակունք», որտեղ հրատարակված են ուսումնասիրությունները:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Խոսում են մասնակիցները

6 ← Կռիվը հարթեց գինվորը. Տիգրան Դավթյան

Այսօր անգամ շատ ռազմական փորձագետներ դժվարանում են Շուշիի ազատագրումը վերլուծել ռազմարվեստի համար գրված կանոններով: Սակայն Շուշիի ազատագրման մասնակից Տիգրան Դավթյանը շատ լավ գիտի պատասխանը:

«Կռիվը զենքը չհարթեց: Կռիվը հար-

թեց գինվորը՝ մարդը: Շուշիի ազատագրման մասին ռադիոազդանշանով /ռազմա/ Դուշման Վարդանը տեղեկացրեց, ասեց՝ տղերք, Շուշիից եմ ձեզ հետ խոսում: Ուզում եմ, որ ազատագրման մասին լուրեր դեռ շատ լսենք»:

Տիգրան Դավթյանի խոսքով՝ պայքարը սերնդեսերունդ է փոխանցվում հայերին:

«Մենք դիմացանք և այն դժվարին պայմաններում չկորցրինք մեր հավատը՝

հանուն միասնական հայրենիքի: Մեր պայքարը պետք է լինի այնքան, քանի մեր հայրենիքի հողերը բռնագրավված են: Սրով լինի, գրչով լինի, երգով լինի՝ հայությունը պետք է ապրի Միացյալ Հայաստանում, հակառակ դեպքում՝ մեր պայքարը վերջ չի ունենա, և Շուշիի ազատագրումը սկիզբն էր», - նշում է Տ.Դավթյանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ



Ցավոք, չտեսավ բաղձալի հաղթանակը



Ամեն մեկը մի տան ճրագ ամեն մեկը մի մոր որդի ամեն մեկը սիրած թողած ամեն մեկը հերոս դարձած Դու գոհվել ես այժմ չկաս Բայց մեր սրտում, միշտ կաս ու կաս:

Ուսուցիչ պիտի դառնար: Ընդունվել էր Արցախի պետական համալսարանի նախնական ռազմական պատրաստության բաժինը, եւ ուրախ էր անչափ, որ հասել է իր նպատակին: Լավ էր սովորում, ու նրանից գոհ էին բոլորը: Պարզ էր ու համեստ: Խելոք էր, խոհեմ, մեծ սիրտ ուներ եւ մեծ հոգի: Ու համեստորեն երագում էր՝ պիտանի մարդ դառնալ հարգատ օջախի եւ Արցախի համար: Այսքան բան: Երագում էր ավարտել ուսումը եւ դպրոցներից մեկում կրթել ու կոփել սաներին, վաղվա զինվորին, հայրենի հողի վաղվա հուսալի պաշտպանին: Ծատ բան էր երագում, շատ բան էր փափագում Ստեփանակերտում ծնված ու հասակ առած Վարուժան Թեւոսյանը,

բայց «չհասցրեց», ամեն ինչ կիսատ թողեց:

Կիսատ թողեց, այո, սակայն՝ առանց զոջալու, առանց «գլուխն ափերի մեջ առնելու»: «Այդ ամենը՝ հետո, - 1990-ի աշնանը ասել էր մորը՝ կտրուկ, առարկություն չվերցնող տոնով, ու ավելացրել, - հա՛, հա՛, մայրիկ, հասկացիր: Ծատ կուզենայի ուսումնա շարունակել, շատ կուզենայի դեռ երկա՛ր-երկա՛ր քայլել համալսարան տանող ճանապարհով, բայց... բայց հիմա ստիպված եմ բռնել մի ուրիշ ճանապարհ... Կռվի դաշտ տանող ճանապարհը: Ժամանակը դա է պահանջում...»:

Հաջորդ օրը նա իր հասակակիցների հետ էր, իր ընկերների՝ Միեր Գրիգորյանի, Ալիկ Մկրտումյանի, Լորիսի, Հրայրի, Գագույայի, Նվերիկի, Դավիթի կողքին: Բոլորն էլ կամավորներ էին, Ծարժման առաջին իսկ օրերից Արցախի ճակատագրով ապրողներ, ազերիների վայրագությունների դեմ խորը ատելությամբ լցված, ըմբոստ հայրողներ: 1991-ի առաջին օրերին էին, եւ առաջին անգամ էին այնքան մոտիկից լսում արկերի ու թնդանոթների որոտը, վիրավորների ծանր հառաչը: Ինքը՝ Վարուժանը, նռնակածիգ էր: Կարգապահ ու բարեխիղճ շարքային զինվոր: Անում էր այն, ինչ անհրաժեշտ էր, ինչ հրահանգում էին: Հրամանատարության առաջադրանքը օրենք էր նրա համար:

Մարտական երկար ուղի է անցել Վարուժանը: Նա ոտք է դրել շատ վայրերում, գրեթե բոլոր թեժ կետերում:

Ֆիզուլի, Աղդամ, Քելբաջար, Հադրութ, Մարտունի, Հորադիզ, Ասկերան, Լաչին... մասնակցել է նաեւ հինավուրց Շուշիի ազատագրմանը, ապրել ուրախության բազում պահեր, նաեւ՝ տեսել շատ ու շատ փորձություններ, դառնություն ու տրտմություն պատճառող դեպքեր ու իրադարձություններ:

Բայց մի օր անգամ հավատը չի կորցրել, չի երկնչել: Միշտ մնացել է անվարան, հավատարիմ իր ուխտին, իր տված երդմանը: Ամենակարեւորը, միշտ քայլել է առջեւից՝ աչքի ընկնելով իր քաջությամբ, անձնագոհությամբ:

1992-ի հուլիսի 4-ին Նախիջեւանիկ գյուղի մոտ Վարուժան Թեւոսյանն ու Միեր Գրիգորյանը ոչնչացրել են թշնամու մեկ S-72 տանկ: Նույն օրը Վարուժանը վիրավորվել է ձեռքից:

Նոյեմբերին, բուժումից հետո նա վերադարձել է իր ծառայության վայրը՝ վերակազմավորված 71-րդ մոտոհրաձգային գումարտակը: Հաջվի առնելով նրա փորձն ու ռազմական գիտելիքները՝ գումարտակի հրամանատարությունը նրան նշանակում է ջոկի հրամանատար: Նա իր ջոկով մասնակցում է Լաչինի միջանցքում տեղի ունեցած մարտական գործողություններին: Մարտական գործի նրա իմացությունը, հմտությունը առանձնահատուկ ուժով դրսևորվեցին Կուբաթլուի եւ Ջեբրայիլի շրջաններում մղված մարտերի ժամանակ:

1993-ի դեկտեմբերին Վարուժանը գումարտակի կազմում մասնակցել է՝ սկզբում Աղդամի, հետո Ֆիզուլու շրջանի մարտերին: 94-ի հունվարի 15-ին Վերին Սեփդահմեդի գյուղի մոտ նա վիրավորվում է որովայնից, բայց շարունակում է կռվել մինչեւ թշնամու գրոհի կասեցումը...

Վարուժան Թեւոսյանը միշտ եւ ամենուր իրեն դրսևորել է որպես քաջ ու անվեհեր զինվոր, միշտ եղել է ամենավտանգավոր կետերում, օգնել ընկերներին, ճիշտ եւ արագ կողմնորոշվել ամենադժվարին իրավիճակներում...

Նրան հիշում, նրա մասին կարոտով են խոսում ո՛չ միայն հարազատները: Մարտական ընկերներից մեկը պատմում է գարմանալի մի դեպք, որ խոսում է նրա մեծության, նրա նվիրվածության մասին:

- Ֆիզուլի քաղաքից ոչ հեռու գտնվող փոքրիկ մի գյուղի մոտ վիրավորվել է Վարուժանը: Ես կրակի տարափի տակ մի կերպ հասա նրան եւ, ցույց տալով առաջին բուժօգնությունը, ուզում էի տեղափոխել դաշտային հոսպիտալ: Եվ ի՞նչ: Չէր ուզում ելթարվել: Ուզում էր շարքում մնալ մինչեւ մարտի ավարտը: Չէր ուզում ցած դնել ավտոմատը: Վերջապես համոզեցի, բայց մեծ դժվարությամբ: Ահա այսպիսին էր Վարուժանը, որը քանի՜-քանի՜ անգամ նայել է մահվան աչքերին, իր աննկուն կամքով, իր հերոսական արարքներով ոգեշնչել ընկերներին, օրինակ ծառայել շատերին: Իսկ թե ինչպես է օգնել, ինչքան շատ է հոգացել իր ջոկի տղաների մասին՝ գիտեն միայն ականատեսները: Վարուժանը սիրում էր կյանքը: Նա ծնվել էր ապրելու, արարելու, հայրենի օջախն ու իրեն ծնած-սնած Ղարաբաղն էլ ավելի շենացնելու համար:

Ցավոք, նա չտեսավ մեր այնքան բաղձալի հաղթանակը: Անձնուրաց մարտիկի կյանքի թելը կտրվեց 1994-ի մայիսի 13-ին, Մարտակերտի շրջանի Սեյտուլան գյուղի ազատագրման համար մղված դաժան մարտում: Լսո՞ւմ եք. 1994-ի մայիսի 13-ին, երբ այնքան մոտ էր բաղձալի ժամը:

Հաջորդ օրը՝ մայիսի 14-ին, հակամարտության գոտում հաստատվեց զինադադար: Իրենց թվաքանակով պարծեցող եւ աչ ու ձախ հոխորտացող ազերիները ստիպված էին ճանաչել Հայոց բանակի, հայ զինվորի բազկի ուժը: Եվ ճանաչեցին: Ու նաեւ խորապես համոզվեցին, որ իրենք անուժ են՝ ընկճելու արցախցու ազատատենչ ոգին, կոտրելու նրա անսասան կամքը, փշրելու նրա հավատը արդարության ու ճշմարտության նկատմամբ...

Միջայել ԲԱԼՅԱՆ

Գեորգիեյան ժապավեն կամ ռուսական դիվերսիա

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի՝ Մայիսի 9-ին գեորգիեյան ժապավենները զարդարում էին որոշ պետական այրերի բաճկոնները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առաջին տիկնոջ զգեստը:

Որքանո՞վ է ճիշտ գեորգիեյան ժապավեն կրելը: Այս հարցն ուղեցինք ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ, պատմաբան Լեռնիկ Յովհաննիսյանին, ով ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի խորհրդանիշը Սասունցի Դավիթ տանկային շարասյունն է համարում, այլ ոչ թե գեորգիեյան ժապավենը, որը ռուսական կայսրության խորհրդանիշ է:

«Մեզ համար Մայիսի 9-ը ունի մեծ նշանակություն՝ Շուշիի ազատագրման եւ Պաշտպանության բանակի կազմավորման օր: Կարծում եմ՝ մեր Եռագույնը ամենաճիշտ եւ ամենաընդունելի տարբերակն է», - նշեց նա:

Պատգամավորի խոսքով՝ գեորգիեյան ժապավենը որպես Հայրենական մեծ պատերազմի խորհրդանիշ սկսեց կիրառվել 2005 թվականին՝ «ՔԱ

НОВОСТЫ» լրատվական գործակալության եւ «Ուսանողական համայնք» համառուսաստանյան հասարակական կազմակերպության կողմից: Որոշ ժամա-

«2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդային բանակում ռուսներից հետո հայ ազգը 2-րդն էր իր մասնակցության թվով: 300 հազար հայորդի-



նակ անց մասսայականացվեց եւ տարածվեց նախկին Խորհրդային երկրներում: Հայաստանն ու Արցախը եւս գերծմնացին երեք սեւ եւ երկու նարնջագույն (դեղին) ժապավենից:

ներ իրենց կյանքն են զոհաբերել: Ունեցանք Խորհրդային Միության 8 հերոս, մոտ 68 գեներալ, 4 մարշալ: Մեր ժողովուրդը շատ մեծ ներդրում է ունեցել 2-րդ աշխարհամարտում, հատկապես՝ ֆաշ-

իզմի դեմ տարած պայքարում», - ասաց Լեռնիկ Յովհաննիսյանը:

Պատմաբանը շեշտեց, որ Բելոռուսը Ռուսաստանի եւ Ուկրաինայի հետ ամենածանր հարվածներն է ստացել ֆաշիստներից եւ, եթե անգամ Բելոռուսում կրում են գեորգիեյան ժապավենը, ապա՝ իրենց պետական զինանշանի կամ պետական դրոշի խորհրդանիշների հետ: Ինչ վերաբերում է նախկին խորհրդային երկրներին եւ ԵՏՄ անդամ Ղազախստանին եւ Դրոզստանին, ապա այդ երկրներն ընդհանրապես դեմ են գեորգիեյան ժապավեններին:

«Այսօր ռուսական քաղաքական շրջանակներում ժապավենն օգտագործվում է որպես Հայրենական մեծ պատերազմի «մասնավորեցման» գործընթաց: Կարծես թե միայն Ռուսաստանն է պայքարել, - նշեց պատմաբանը եւ ընդգծեց, - եթե մինչեւ 2005թ. մենք չէինք կրում գեորգիեյան ժապավեն, ուրեմն չէի՞նք հարգում մեր նախնիների արածն ու այն ավանդը, որ մատուցել են ֆաշիզմի դեմ պայքարում: Իհարկե, հարգում էինք»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ